

Հայրիկ կ'օրհնէ զԶեզ և կը յուսայ որ «Արարատ» ի
խմբագրութիւն աւելի ևս փառաւոր կացուցանէք ի փառս
Մայր Աթոռին և յաւէտ ևս պարծանք խմբագրող անձանց:

Ի վերայ իսկականին ստորագրեալ է՝
ՄԿՐՏԻԶ Կարողիկոս Ամենայն Հայոց

Ի 23 Յունուարի 1902 ամի

և ըստ Տոմարիս ՌՅԾԱ.

ի Հայրապետութեան մերում Թ ամի

Մարարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ.

Թ. 99.



Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն



ԵԶՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏՆԵՐԸ



Աստուածասէրն իւր կամբից ինչպէս թշնամուց կզգու-
շանայ:

Լաւ է յստակ խորհրդով ննջել, քան պիղծ խորհրդով
աղօթք մատուցանել և վարձք չառնել ու զուր աշխատիլ:

Ամրապնդիր մարմինդ նեղութեամբ և սիրտդ Աստծու
երկիւղովք, որ աներկիւղ լինիս սատանայի մահաբեր նե-
տերից:

Ով երկիւղածին սիրում է՝ Աստծուն սիրոյ արձան է
կանգնեցնում և սատանային՝ անհաշտ թշնամութիւն:

Սէրն ու երկիւղը քեզ բնութիւնն աբայ որ խաբէու-
թեամբ չյոգնիս:

Որչափ զրկուիս և յոգնիս և նեղուիս և համբերես՝
այնչափ անապական զանձ կպատրաստես քեզ երկնքումը:

իսկ եթէ տրտնջում ես և նեղսրտում՝ զուր ես աշխատում և անվարձ կմնաս:

Զօրացիր Քրիստոսի չարչարանքներովը և Նրա համար համբերիր, որ վայելես անանց բարութիւնները:

Ով գարունն հանգիստ մնայ՝ ձմեռը սովից և սառնամանիքից կսատակի:

Ով այս աշխարհում մարմինն է պարարում՝ յաւիտեանկան հանգիստը չի մտնի:

Հնազանդիր սիրով, ազօթիր յուսով, աշխատիր հաւատով և կայծառանաս երկնային հարսանիքում:

Աստուած քեզ ինչ շնորհ որ տայ՝ կարօտեալների պէտքերին ծառայեցուր, որպէս զի շնորհն աղբիւրանայ և դու փառաւորիս:

Մարմնասէր կրօնաւորը խոզի է նման՝ ծովացած մեղքերիցը կխեղդուի:

Արտասուքը մեղքերի լուացում է, հառաչելն ապաշխարութիւն. իսկ ով բոլոր ժամանակը կրօնաւորական կարգով անցնէ սգի և տրտմութեան մէջ, նա որպիսի երանական փառքեր է ժառանգելու:

Կեղծաւոր կրօնաւորը սատանայի դիմակ է, սատանային իւր տակն է թագցրած, անդամների զաղրութիւնը ծածկում է և նկարակերպ դիմակներով խաբում է տեսնողներին:

Այդպիսիները գառնազգեստ գայլեր են, որոնց սպառնաց Քրիստոս անհաւատների հետ դասել:

Ով եղբօրը տեսնելիս տրտում մնայ՝ յաղթուած է կեղծաւորութիւնից. ով առանձին նստած զուարթ է լինում՝ գերուած է սատանայից:

Մեր բերանները հոտել են պասից և մեր լեզուներն ընդարմացել են սաղմոսերգութիւնից, իսկ ինչ որ Աստուած է ուզում՝ այն չունինք, այն է՝ սէր ու խոնարհութիւն: Նրթունքներով ենք սիրում Աստծուն և զուր ենք աշխատում:

Անասնի միսը չեն ուտում, իսկ եղբօրը անյապարար են ուտում, գինի չեն խմում, իսկ հոգին արիւնով են շաղախում. ամուսնացածներին ատում են, իսկ պիղծ խորհուրդ-

ներով մշտապէս պոռնկուում են. զգեստի վատն են հագնում, իսկ ագահութեամբ այրւում են. այդպիսիներից պէտք է փախչիլ և հետերը հաղորդութիւն չունենալ:

Կրօնաւորը պէտք չէ կենակից լինի մանուկներին, որոնցից նետաձգութիւնը իժի թոյնից վատ է:

Աչքերի պայծառութիւնը շլանում է ծխից, իսկ կրօնաւորի պարծանքը մանուկների ընտելութիւնից: Եթէ երկինքը բանայ այդպիսին՝ մի՛ մտնիր. եթէ հրեշտակի վարք ունենայ՝ մի՛ հաւատար:

Մանուկ կրօնաւորը, որ ծերերի ձեռքի տակ չէ, դիւրին որս է սատանային:

Մանկագոյն կրօնաւորի մի՛ ասիր քո ծածուկները, այդ նրա համար մահ է:

Զբօսասէր կրօնաւորը գերգեսացի դւ է:

Մի՛ սիրիր կերակուրների կամ ըմպելիների յագուրդը, ապա թէ ոչ մարմինդ պոռնկութեան քաղաք կշինես և սատանայի ամրոց:

Գինին ախտերի բազմութիւնն է, արթնացնում և Աստծու երկիւղը հալածում:

Մի՛ սիրիր եղբօրդ փափուկ կերակուրներով կամ ըմպելիներով, կամ պատուական հանդերձով կամ դատարկութեամբ, որ Կայէնի պատիժը չժառանգես:

Մի՛ արտմեցնիր ոչ ոքին և մի՛ արտմիր ոչ ոքից:

Մեղաւոր աշակերտին մի՛ բարկանոսր, որովհետեւ հիւանդն իւր կամքով չէ որ հիւանդանում է:

Առանձին յանդիմանելն է աստուածսիրութիւն:

Խրատի պատրուակով եղբօրդ վրայ թունաթափ մի՛ լինիր:

Վէրքը կակուղ դեղով է բժշկւում, իսկ ախտը՝ բարեգործութեամբ:

Գոհութեամբ աշխատիլը չի մնայ առանց պսակի:

Պճնող կրօնաւորը դեւերի ասպնջական է:

Մարմնական հարստութեան ցանկալը պոռնկութիւն է:

Եթէ Աստծու համար ես հալածւում՝ խէթ մի՛ պահիր:

Աղօթելիս խորհուրդներդ ընտրիր և ապա սաղմոսիր:

Եթէ թշնամուդ համար չես աղօթում ինչպէս քեզ
համար, ապա լաւ է չաղօթել:

Եթէ մէկից բան ես ստանում՝ յիշիր աղօթքումդ:

Դեւերը ժողովւում են հարստութեան վրայ, հրեշտակ-
ները՝ բաշխելիս:

Ընչասիրութիւնը կռապաշտութեան լծակցութիւն է:

Սուրբ սրտից աղօթքը պատարագի փրկութիւն է գոր-
ծում:

Կերակուրների համեղութիւնը մի՛ փնտռիր:

Նա է տեսնում Քրիստոսին ով ասում է հարստու-
թիւնը:

Զբաղմունքը կրօնաւորի ամուր բերդն է:

Եղբայրասէր կրօնաւորը Քրիստոսի հետ ազգակցութիւն
ունի:

Խաղաղասէր կրօնաւորը եղբայրութեան պայծառ ջահն է:

Ով ոխ ունի եղբօր հետ՝ սատանային դաշնակից է. ով
խէթով է ննջում՝ բարկացնում է Աստծուն:

Երեկոն երբ մահիճ ես մտնում՝ համարիր թէ գերեզ-
ման ես իջնում:

Թող սնտաի թարթափող խորհուրդներդ ու խօսքերդ
և բւեռիր քեզ Աստծու երկիւղին ու միտքդ բեր դատաս-
տանի օրը:

Ով եղբօրը մարմնաւոր կերակրից զրկում է՝ Քրիստոսի
սեղանին ցանկացող չէ:

Ով շտապում է մէկից բան առնել՝ յոյս չունի Քրիս-
տոսից:

Եթէ ինդրում է մէկը քեզնից և տալիս ես՝ գոհացիր
Աստծուց, որովհետեւ դու աւելի շահուեցար քան նա:

Մի՛ լինիր ծաղրածու և կատակերգակ, որ չժառանգես
անվախճան լացը:

Կատարելութիւն է հնազանդիլը խոնարհութեամբ և
յուսով, աշխատիլը՝ զիտութեամբ:

Ուրիշ է առաքինութիւնը, ուրիշ է առաքինի լինելը:

Աւուր հացդ քրտնքով հրամայեց քեզ ուտել, իսկ դու
յաւիտենական կեանքը քնով ես կամենում ժառանգել:

Նօթանասուն տարի է արուած քո կեանքիդ և այն լաց ու թացով, իսկ դու հաղարամեայ օրը առանց գլխացաւանքի ես կամենում ժառանգել:

Յոգնածներին հրամայեց հանգիստ և ոչ թէ մարմնասէր օրդնապարարներին:

Զսպիր զրգռուող բարբդ չորակերութեամբ, սրտիդ խստութիւնը կակղացուր տքնութեամբ, մարմնիդ զիճութիւնը ցամաքեցուր աշխատութեամբ և ապա թէ կարող ես վերջնել Քրիստոսի խաչը:

Սորվեցուր սիրտդ սիրել եղբօրդ և սիրիւր քո մարմինդ ինչպէս նենգաւոր եղբօր:

Երկիւղածին առելը՝ աներկիւղին սիրելը — մի չարիք է:

Եթէ ցաւակցութեամբ չես սիրում եղբօրդ՝ մի՛ կենար նշա հետ:

Նեղիւր մարմինդ գիտութեամբ և գրոց վկայութեամբ:

Կան առաքինութիւններ, որ հաճելի չեն Աստուծոյ, և այդ չարի խաբէութիւնն է:

Փափկութիւնն ու հանգիստը առիւր:

Պէտք ունեցող եղբօրդ տուր:

Վաղն հայրենիք ես երթալու՝ այնտեղ հանգստացիր:

Աղօթելիս ճանաչիր թէ ում հետ ես խօսում կամ ինչ ես խնդրում և խորհուրդդ քեզ հաւաքիր:

Երբ Աստուած քեզ փափուկ կերակուր է ուղարկում կամ մաքուր հաց կամ միրգ՝ քո ուտելուցդ առաջ Քրիստոսի մասը տուր կարօտ եղբօրը, որ Քրիստոս քեզ սեղանակից լինի:

Երբ սեղան ես նստում՝ խոնարհեցուր գլուխդ, ուրիշ բան մի՛ տեսնիր, բայց միայն քեզ և կեր զոհութեամբ:

Մի՛ փնտռիր կերակուրների համեղութիւնը և յագեւնալ, այլ այնչափ միայն որ ապրիս:

Քո հանդերձը թող չլինի պճնուելու՝ այլ մարմինը պաշտպանելու համար, ինչպէս այն՝ որ ծածկում է մեռելին:

Ապա թէ որ աւելորդն ու անպատշաճն ես սիրում, կզրկուիս երկնային զարդից:

Եթէ հիւանդ ես կամ յոգնած՝ իշխանութեամբ մի՛ վարուիր:

Եթէ սիրում ես քեզ՝ զոհացիր Աստծուց, իսկ եթէ չեն սիրում՝ մի՛ տրտնջիր և մի՛ տրտմեցնիր ուրիշին, այլ փոքր ինչ նեղիր քեզ լուծեամբ, որովհետեւ պատերազմողին համբերութիւն է հարկաւոր:

Միտք բեր դատաստանի օրը որ պատրաստել է Աստուած:

Այս կեանքը պատերազմ է:

Լաւ մարդը զուարթ է լինում:

Այն խնդրենք որ Քրիստոս խոստացաւ տալ, թէ Ուր ես եմ՝ այնտեղ և իմ պաշտօնեան կլինի:

Ծերութիւնն ու հիւանդութիւնը ժամանակաւոր պատերազմ է. որովհետեւ մարմնի զօրութիւնը պակասել է, վտանգը բազմացել և հանգիստը սակաւ կամ բնաւ իսկ չըկայ. և սատանան բորբոքում է ցասման բոցը, ատել է տալիս կարգը, հայհոյել է տալիս առաջնորդին, տրտնջել եղբորիցը. ահա այստեղ պէտք կայ սիրոյ և զթութեան, երկայնամիտ լինելու և մարտիրոսական պսակն առնելու:

Ով բարկանում է եղբօրը՝ և այդ չէ Աստծու համար՝ անողորմ հրեշտակ կհանդիպի նրան:

Ով սաղմոսելիս ծիծաղի և մարմնական խօսք մէջ բերէ՝ սրբութիւններից զուրսը կանդնի մինչև առողջանայ:

Շատ լաւ է աղօթելիս ձեռքերն համբառնալ դէպի Աստուած, բայց աւելի կարեւոր է եղբայրներին ծառայել:

Երբ բորձրացնում ես ձեռքերդ աղօթելու՝ երեսիդ հանդէպ բռնիր և զգուշացիր օտար խորհուրդներից:

Եթէ հաւատում ես եղբօրդ՝ հնազանդիւր նրան, ապա թէ ոչ՝ սովորականից զուրս մի՛ դար:

Կրօնաւորը պարտական է արեան չափ հակառակիլ մարմնական ցանկութիւններին և այնպէս պատարագ լինել Աստծու:

Քրիստոս ասաց. Ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք, և ով որ կամենում է ինձ գալ՝ թող ուրանայ իւր անձը և առնէ խաչը և գայ իմ ետեւից: Եւ ով չէ ուրա-

նուժ իւր անձը՝ չէ կարող Քրիստոսի խաչը վերցնել և չէ ճշմարտութիւնից. և ով չէ ճշմարտութիւնից՝ չէ կարող ժառանգել յաւիտենից կեանքը, այլ ստուերումն է և խաւարում է շրջում: Եւ ով իւր կամքն է պաշտում՝ աշխարհական գործ անգամ չէ կարող վճարել, թող թէ հոգեւոր. թէպէտ և մեծամեծ վաստակներով անցնէ իւր կեանքը՝ չէ կարող հասնել կրօնաւորական կարգի: Իսկ հնազանդը՝ թէպէտ և պղերզ և ծոյլ՝ այսուամենայնիւ կրօնաւոր է և ծառայութեամբ Աստծու տանն է:

Լաւ է անգործ մեղուն քան ժիր պիծակը:

Ով իրան ուրացել է և պատուիրանի լծի տակ մտել վերցնելով Քրիստոսի խաչը՝ պէտք չէ ընտրութիւն անէ առաջնորդի հրամանների մէջ, այլ անսայ երկիւղածութեամբ, որովհետեւ Պետրոսն էլ մի բան չհասցեց իւր ընտրողութեամբը:

Եւ եթէ թերահաւատ ես դէպի առաջնորդը՝ մի՛ կենար նրա հետ, որովհետեւ հոգիդ կկորցնես: Երբեմն կտրտընջես, երբեմն կնկովես, երբեմն կընդդիմաբանես, ուրիշների մօտ կչարախօսես, սէրն ու հնազանդութիւնը կվերացնես եղբայրներից և ամենքին ամբարշտութիւն կտրվեցնես. այդպիսուն միաբանութիւնը դատապարտութիւն է:

Տգէտ և անընտրող առաջնորդը բժշկելիս խոցում է, ուղղելիս խորտակում. սիրոյ տեղ ատելութիւն է ցոյց տալիս, ատելութեան տեղ՝ սէր, և խառնափնթորելով եղբայրներին՝ ապարդիւն է դարձնում նրանց ջանքը:

Նա որ սիւն է եղած և բոլոր շինուածքը իւր վրայ է հաստատած՝ եթէ խորտակուի՝ ամենքին վայր կկործանէ: Այսպէս և առաջնորդը՝ եթէ Աստծու կամքի համաձայն չվարուի՝ բոլոր եղբայրութիւնը սատանային կմատնէ և փոխանակ առաջնորդութեան՝ կորստեան կլինի պատճառ: 6

Մեծ հերձուած և անբժշկելի չարիք է այդպիսի առաջնորդութիւնը, որովհետեւ մարդիկ աւելի օրինակին են նայում քան ճշմարտութեանը:

Ով փոքրիկներից մէկին գայթակղեցնում է՝ գերեզմանի արժանի չէ, իսկ ով շատերին է կորստեան պատճառ լինում

ինչ ասես նրան, ոչ ապաքէն գործակից եղաւ սատանային
և նրա հետ տանջուելու է գեհնում:

Հոգեւոր առաջնորդը աստուածային հուր է, ապականիչ
ախտն այրում է, զիժուլթիւնը ցամաքեցնում, կրօնաւորա-
կան հանդիսով փորձում է ինչպէս ոսկին բովում և անաղտ
սրբութեամբ եղբայրներին Աստծուն է ընծայում. իսկ ինքը
հաւատարիմ ծառային պէս թաղաւորում է տան քա-
ղաքի վրայ:

Ագահ՝ այսինքն կռապաշտ՝ առաջնորդը աւաղակապեա
է: Աւաղակներ շատ կան աշխարհում և ամենքը սպանող
չեն, իսկ նա ամեն օր սպանութիւն է գործում: Ոչ միայն
մարմինն է սպանում ինչպէս աւաղակ, այլ սատանային գոր-
ծակից է լինում և իրան հաւատացած հոգին է կորցնում:
Նա ամեն չարիք հեշտութեամբ է գործում, բայց բարիք՝
ոչ երբէք:

Եթէ բոլոր եղբայրների հիւանդութիւնը քեզ չէ ցա-
ւեցնում՝ մի՛ լինիր առաջնորդ:

Եթէ անարժանին պէտք եղածին պէս չես յանդիմա-
նում՝ մի՛ լինիր վարդապետ:

Սուրբ վարքն է վարդապետին քաջասիրտ դարձնում:

Քաղցր է մեղրը, բայց հիւանդ մարմնին վնաս է բե-
րում. օգտակար է խրատն ու յանդիմանութիւնը, բայց ով
որ երեսն արեւմուտք է դարձրել՝ նրան անօգուտ է:

Գրաբարից քարգմանեց Դաւթուս Տէր-Մկրտչեան

29 դեկտ. 1901.

